REDEMOS

RECONFIGURING EU DEMOCRACY SUPPORT. TOWARDS A SUSTAINED DEMOS IN THE EU'S EASTERN NEIGHBOURHOOD

Քաղաքականության համառոտագիր 1

ԵՄ արևելյան հարևանության ժողովրդավարության աջակցության միտումներն ու մոդելները 2005-2022 թվականներին

Մարինա Ռաբինովիչ և Սթիվեն Քիմմել

Ապրիլ, 2025

Funded by the European Union

The REDEMOS project has received funding from the European Union's Horizon Europe research and innovation programme under grant agreement No 101061738. The Associated Partner University of Surrey has received funding from UK Research and Innovation (UKRI) under the UK government's Horizon Europe funding guarantee under grant number 10040721. The Associated Partner University of St. Gallen has received funding from the Swiss State Secretariat for Education, Research and Innovation (SERI). Views and opinions expressed are, however, those of the author(s) only and do not necessarily reflect those of the European Union, UKRI and SERI. Neither the European Union nor UKRI or SERI can be held responsible for them.

Իրավիճակի նկարագրում

Վերջին հինգ տարվա՝ ԵՄ-ի արևելյան հարևանության վեց երկրներին տրամադրվող զարգացման պաշտոնական աջակցության (ԶՊԱ/ODA) ծավալը կայուն աճել է: Մինչդեռ ԵՄ-ն և նրա անդամ պետությունները, լինելով ԶՊԱ-ի աշխարհի խոշորագույն դոնորներից, բախվում են օգնության արդյունավետ համակարգման դժվարությունների՝ դոնորների մեծ թվակազմի և դրանց առաջնահերթությունների տարբերությունների պատճառով: **Ժողովրդավարության աջակցության համաձայնեցումը հատկապես բարդ է՝** հաշվի առնելով ժողովրդավարության աջակցության ինքնին վիճարկելի բնույթը և տարածաշրջանում Ռուսաստանի ապակայունացնող ազդեցությունը: **Ժողովրդավարության աջակցության արդյունավետ կառավարումը պահանջում է ժողովրդավարության մոդելների համընդհանուր ընկալում և փոխկապակցում այնպիսի վերաբերելի հասկացությունների հետ,** ինչպիսիք են մարդու իրավունքները, օրենքի գերակայությունը և գենդերային հավասարությունը:

Առկա մարտահրավերները առավել լավ սահմանելու և պարզաբանելու նպատակով՝ REDEMOS հետազոտական խումբը **2005-ից 2022 թվականների ժողովրդավարության աջակցության 1474 ծրագրերի տվյալների շտեմարանի** հիման վրա **վերլուծել է ԵՄ արևելյան հարևանության երկրների ժողովրդավարության ֆինանսավորման մոդելները:** Տվյալների շտեմարանը ներառում է ԵՄ ինստիտուտների (184,25 մլն ԱՄՆ դոլար), ԵՄ անդամ պետությունների (146,62 մլն ԱՄՆ դոլար), ԱՄՆ-ի (139,07 մլն ԱՄՆ դոլար) և միջազգային կազմակերպությունների (26,33 մլն ԱՄՆ դոլար) ներդրումները: Վերլուծությունը ժողովրդավարության աջակցությունը դասակարգում է վեց մոդելների՝ ընտրական, լիբերալ, մասնակցային, էգալիտար, խաղաղարար և ֆեմինիստական՝ միևնույն ժամանակ դիտարկելով նաև լավ կառավարման, մարդու իրավունքների և օրենքի գերակայության ոլորտներում իրականացվող ծրագրերի ֆինանսավորումը:

Վերլուծության արդյունքները ընդգծում են **դոնորների համակարգող գործունեության բարելավման, ստանդարտացված հաշվետվության և առաջնահերթ ոլորտներում** կայուն ընդգրկվածության անհրաժեշտության մասին՝ ԵՄ արևելյան հարևանության ժողովրդավարության աջակցության ազդեցությունը ավելի խորացնելու համար:

Հիմնական եզրակացություններ

➤ Ժողովրդավարության աջակցության վերլուծությունը բարդանում է **ՏՀԶԿ** (Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն) **գրադարանում ծրագրերի անվանումների և նկարագրությունների միասնական ստանդարտների բացակայության պատճառով:** ԵՄ-ի և անդամ պետությունները էլ ավելի են խորացնում այս խնդիրը, քանի որ վերջիններիս հաշվետվություններում հակասություններ կան. որոշ նախագծեր պարունակում են ֆինանսավորվող գործունեության հստակ նկարագիր, մյուսները՝ անորոշ են, իսկ մի մասում էլ ի սպառ բացակայում են կոնկրետ նկարագրությունները, ինչը հետազոտողների և քաղաքական գործիչների համար դժվարացնում է նախագծերի արդիականության և արդյունավետության գնահատումը:

➤ **Ժողովրդավարության աջակցության ֆինանսավորումը ԵՄ արևելյան հարևանության երկրներում 2005-2022 թվականներին զգալիորեն աճել է.** ԵՄ-ի աջակցությունը հասել է իր գագաթնակետին 2015 թվականին՝ կազմելով 23,7 միլիոն ԱՄՆ դոլար, իսկ ԵՄ անդամ պետությունների աջակցությունը ռեկորդային մակարդակի է հասել 2021 թվականին՝ 22,2 միլիոն ԱՄՆ դոլար ընդհանուր գումարով, այն դեպքում երբ ԱՄՆ-ի աջակցությունը ամենաբարձրն է եղել 2020 թվականին՝ կազմելով 20,3 միլիոն ԱՄՆ դոլար: Այս զարգացումները նախաձեռնությունների ընդլայնման հնարավորություններ են ստեղծում, սակայն միևնույն ժամանակ առաջացնում են դոնորների համակարգման խնդիրներ, քանի որ ֆինանսավորման առաջնահերթությունների փոփոխությունը և ժողովրդավարության մոդելների բազմազանությունը պահանջում են ավելի արդյունավետ համաձայնեցում՝ կրկնօրինակումները կանխելու և ազդեցությունը առավելագույնի հասցնելու նպատակով:

➤ Թեև ԵՄ արևելյան հարևանությունում ժողովրդավարության աջակցության նախագծերի ընդհանուր թիվը 2005-2022 թվականներին գերազանցել է 1000-ը, դրանցից միայն 65-ն են ստացել ավելի քան 1 միլիոն ԱՄՆ դոլար ֆինանսավորում: **Նշված նախագծերի մեծ մասը կարճաժամկետ և հատվածական բնույթ է ունեցել՝ պայմանավորված շարունակականության բացակայությամբ մասնավորապես ընտրական և ֆեմինիստական մոդելների համատեքստում:** Սա մտահոգությունների տեղիք է տալիս դրանց երկարաժամկետ ազդեցության հեռանկարի և ընտրությունների ու ճգնաժամային իրավիճակների շրջանակներից դուրս մշտական փոխգործակցության անհրաժեշտության առումներով:

➤ Չնայած ընտրական ժողովրդավարության մոդելների լայն շրջանակին՝ ներառյալ ընտրական իրավունքը, կուսակցությունների ֆինանսավորումը, զանգվածային լրատվամիջոցների օգտագործումը, ընտրությունների մոնիտորինգը և ինստիտուցիոնալ կարողությունները, **ԵՄ-ի և ԵՄ անդամ պետությունների կողմից Արևելյան հարևանության երկրներում ընտրությունների աջակցության ֆինանսավորումը 2005-2022 թվականների ընթացքում նվազագույն է եղել և հազվադեպ է գերազանցել տարեկան 1 միլիոն ԱՄՆ դոլարը:** Նկատելի մի քանի վերելքները հիմնականում կապված են եղել Ուկրաինայում ընտրությունների հետ, ինչը ընդգծում է առավել ակտիվ փոխգործակցության անհրաժեշտությունը մասնավորապես ընտրություններին Ռուսաստանի միջամտությանը հակազդելու համատեքստում:

➤ **ԵՄ ժողովրդավարության աջակցության** վերլուծությունը սահմանում է ֆինանսավորման բարդ, բազմամոդել միջավայրը՝ ռազմավարական և ռեակցիոն մոտեցումների հավասարակշռված համադրությամբ, որում դոնորները հարմարվում են քաղաքական զարգացումներին՝ միևնույն ժամանակ պահպանելով երկարաժամկետ ներգրավվածությունը ժողովրդավարության տարբեր մոդելների շրջանակում:

Քաղաքականության վերաբերյալ առաջարկներ

2005–2022 թվականների ընթացքում ՏՀԶԿ գրադարանում գրանցված 1474 նախագծերի էմպիրիկ վերլուծության հիման վրա ՌԵԴԵՄՈՍ հետազոտական խումբը ներկայացնում է քաղաքականության վերաբերյալ հետևյալ առաջարկները.

- **ներդնել** ԵՄ-ի և ԵՄ անդամ պետությունների ժողովրդավարության աջակցության ծրագրերի վերաբերյալ տվյալների և դրանց դասակարգման միասնական ստանդարտներ, որոնք պետք է ներկայացնեն ՏՀԶԿ գրադարանները,

- **ապահովել** ֆինանսավորման առաջնահերթությունների ավելի ընդգրկուն համաձայնեցում և ժողովրդավարության զարգացման նախագծերի բովանդակությանը վերաբերող ավելի լավ համակարգում ԵՄ-ի, դրա անդամ պետությունների և ԵՄ-ի արևելյան հարևանությունում գործող այլ դերակատարների միջև,

- **ամրապնդել** ԵՄ-ի և ԵՄ անդամ պետությունների ակտիվ մասնակցությունը ընտրական մոդելի շրջանակում ԵՄ արևելյան հարևանության երկրներում՝ մասնավորապես ընտրական գործընթացների թվային սպառնալիքներին դիմակայելու կարողությունների բարձրացման նպատակով,

- **ուսումնասիրել** Եվրոպական հանձնաժողովի և ԵՄ անդամ պետությունների ժողովրդավարության աջակցության շարունակականությունն ապահովելու հնարավորությունները, հատկապես այն դեպքերում, երբ դա նպաստում է աջակցության միջոցառումների արդյունավետության և ազդեցության բարձրացմանը,

- **դիտարկել** Ուկրաինայում ապակենտրոնացման և ներքին հնարավորությունների ընդլայնմանն ուղղված բազմակողմ աջակցությունը «U-LEAD Եվրոպայի հետ» ծրագրի շրջանակում՝ որպես պոտենցիալ մոդել ԵՄ արևելյան հարևանությունում և դրա սահմաններից դուրս առաջնահերթ բարեփոխումների երկարաժամկետ աջակցության համար,

- **զերծ մնալ** ԵՄ արևելյան հարևանության երկրների հետ ԵՄ-ի և նրա անդամ պետությունների փոխազդեցության երկարաժամկետությունն ու շարունակականությունը որպես պարտադիր պայմաններ դիտարկելուց՝ դրանց փոխարեն կիրառելով գնահատման մեթոդաբանություն՝ երկարաժամկետ հեռանկարում նախագծերի արդիականությունն ու հնարավոր ներդրումը որոշելու նպատակով:

Ամբողջական հետազոտությունը՝ **ՌԵԴԵՄՈՍ քաղաքականության փաստաթուղթ. ԵՄ արևելյան հարևանության երկրներում ԵՄ-ի, անդամ պետությունների և միջազգային կազմակերպությունների աջակցության միտումները, մոդելները և համակարգումը,** հասանելի է հետևյալ հղումով՝ https://redemos.eu/resources/publications/policy-papers/

REDEMOS: REconfiguring EU DEMOcracy Support.
Towards a sustained demos in the EU's Eastern Neighbourhood

REDEMOS- 101061738
HORIZON-CL2-2021-DEMOCRACY-01-04

Dr Mădălina Dobrescu, NTNU
info@redemos.eu

redemos.eu @REDEMOS_eu REDEMOS Horizon Europe Project